ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

02.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/79

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից 11.06.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«Վանդաժի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Վանդաժի» ՍՊԸ-ն 11.06.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Սպիտակ համայնքի կարիքների համար փողոցների լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերոնշված Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վանդաժի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն):

«Վանդաժի» ՍՊԸ-ն իր էլեկտրոնային հասցեին armeps էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ստացել է ծանուցում, որի համաձայն «Վանդաժի» ՍՊԸ-ն՝ ծանուցումն ուղարկելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պետք է ներկայացնի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ Սպիտակի համայնքապետարանի հանձնաժողովի քարտուղար Արսեն Ավետիսյանի arsenavetis@mail.ru էլեկտրոնային հասցեին:

Ընկերությունը սահմանված ժամկետում՝ հանձնաժողովի քարտուղար Արսեն Ավետիսյանի arsenavetis@mail.ru էլեկտրոնային հասցեին ուղարկել է գնահատող հանձնաժողովի կողմից պահանջված որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Վերոհիշյալ գործողությունը կատարելուց հետո Ընկերությունը սպասել է, որպեսզի www.gnumner.am կայքում հրապարակվի հայտերի գնահատման արձանագրությունը: Պետք է նշել, որ մինչ օրս www.gnumner.am կայքում դեռևս չի հրապարակվել հայտերի գնահատման արձանագրությունը:

Սակայն միայն Սպիտակ համայնքի կարիքների համար «Փողոցների լուսավորության համակարգերի կառուցման» աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին www.gnumner.am կայքում 05.06.2018թ. հրապարակված հայտարարությունից պարզվել է, որ ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Վանդաժի» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ իբրև թե վերջինիս կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ եթնակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ինչպես արդեն նշվել է՝ «Վանդաժի» ՍՊԸ-ն իր էլեկտրոնային հասցեին armeps էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ստացել է ծանուցում, որի համաձայն Ընկերությունը՝ ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պետք է ներկայացներ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթուղթերը՝ Սպիտակի համայնքապետարանի հանձնաժողովի քարտուղար Արսեն Ավետիսյանի arsenavetis@mail.ru էլեկտրոնային հասցեին:

Ընկերության կողմից իր էլեկտրոնային հասցեց arsenavetis@mail.ru էլեկտրոնային հասցեին ուղարկվել է գնահատող հանձնաժողովի կողմից պահանջած որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Վերոհիշյալ փաստը, այն է՝ «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետներում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը, գնահատող հանձնաժողովին ներկայացնելը, կարող է հաստատվել նաև համապատասխան ապացույցներով:

Սակայն, ինչպես հետագայում պարզվել է, անհասկանալի պատճառներով ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից «Վանդաժի» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ իբրև թե վերջինիս կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով: Ընդ որում, քանի որ գնահատող հանձնաժողովի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջների խախտմամբ հայտերի գնահատման նիստի ավարտից հետո նիստի արձանագրությունը ընդհանրապես չի հրապարակվել տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Ընկերությունը զրկվել է հնարավորությունից ստանալու որևէ տեղեկատվություն իր ներկայացրած փաստաթղթերի գնահատման արդյունքների մասին: Եվ, ինչպես արդեն նշվել է, միայն պայմանագիր կնքելու մասին հայտարարությամբ է պարզվել տեղի ունեցածը:

Ուսումնասիրելով թվարկված փաստերը, գտնում ենք, որ «Վանդաժի» ՍՊԸ-ն պատշաճ կատարել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթկատով իր վրա դրված պարտավորությունը, այն է՝ ծանուցումը ստանալուց հետո սահմանված ժամկետում՝ գնահատող հանձնաժողովին է ներկայացրել որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: Սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ չի ստացել Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը և մերժել է «Վանդաժի» ՍՊԸ-ի հայտը:

Վերոհիշյալը հանգեցրել է Կարգի 43-րդ կետի 4-րդ եթնակետի պահանջների խախտմանը, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժվում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ ինչպես ապացուցվում է սույն բողոքով, տվյալ դեպքում առկա է «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում Սպիտակի համայնքապետարանի համապատասխան էլ. հասցեներին ուղարկելու փաստը: Ուստի և առկա չէ «Վանդաժի» ՍՊԸ-ի հայտը, Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն, մերժելու հիմքը:

Միևնույն ժամանակ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջները»:

«Վանդաժի» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով խնդրել է.

1. Պարտավորեցնել ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին դադարեցնելու՝ «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից սահմանված

ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով՝ հայտը մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը:

2. Պարտավորեցնել ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին պահանջելու «Վանդաժի» ՍՊԸ-ից ներկայացնել որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին «Վանդաժի» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ Հասմիկ Ենգոյանը և Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ Սպիտակի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ Սպիտակի համայնքապետարանը 14.06.2018թ. թիվ 034/27-639 գրությամբ Բողոքներ քննող անձին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

«Սպիտակ համայնքը իր կարիքների համար հայտարարել է ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին հայտ է ներկայացրել նաև «Վանդաժի» ՍՊԸ-ն:

Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա է եղել անհամապատասխանություն (ներկայացված է եղել ոչ պատշաճ լիազորագիր), ինչը շտկելու համար գնահատող հանձնաժողովը 22.05.2018թ. N 2 արձանագրությամբ կասեցրել է նիստը և «Վանդաժի» ՍՊԸ-ին armeps.am համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցմամբ առաջարկվել է մեկօրյա ժամկետում շտկել վերը նշված անհամապատասխանությունը: Ընկերության կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովի քարտուղարի arsenavetis@mail.ru էլ. փոստի հասցեին ուղարկվել է ուղղված լիազորագիրը, ինչը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար:

Գնահատող հանձնաժողովի 24.05.2018թ. N 3 արձանագրության համաձայն՝ «Վանդաժի» ՍՊԸ-ն ճանաչվել է ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից և հանձնաժողովի քարտուղարը 24.05.2018թ. armeps.am համակարգի միջոցով ընկերությանը ծանուցել է ծանուցումը ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում arsenavetis@mail.ru էլ. փոստի հասցեին ուղարկել որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

«Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից, սակայն, սահմանված ժամկետում պահանջվող փաստաթղթերը հանձնաժողովի քարտուղարի էլ. փոստի հասցեին չեն ուղարկվել:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը մերժել է «Վանդաժի» ՍՊԸ-ի հայտը և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել է ներկայացնել որակավորումը հիմնավորող փաստաթղթեր, իսկ «Վանդաժի» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ներկայացրել է լիազոր մարմին՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ներառելու նպատակով:

08.06.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարության gnumner.am կայքում ՀՀ գնումների հետ կապված Բողոք քննող անձի կողմից հրապարակվել է հայտարարություն «Վանդաժի» ՍՊԸ-ին գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձի 11.06.2018թ. գրությամբ տեղեկացվել է, որ գործի քննության առաջին նիստը տեղի կունենա 13.06.2018թ. ժամը 15:15-ին և դրանից հետո միայն, տեղեկանալով նիստի վերաբերյալ, «Վանդաժի» ՍՊԸ-ն անհիմն բողոք է ներկայացրել՝ պատճառաբանելով, թե իբր իր կողմից ներկայացվել են որակավորումը հիմնավորող փաստաթղթեր հանձնաժողովի քարտուղարի arsenavetis@mail.ru էլ. փոստի հասցեին՝ չնշելով ուղարկելու ամսաթիվը և չներկայացնելով ուղարկելու վերաբերյալ ապացույց:

Հավաստիացնում ենք, որ գնահատող հանձնաժողովի կողմից 31.05.2018թ N 4 արձանագրությամբ «Վանդաժի» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը կայացնելու պահին և նույնիսկ «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից բողոք ներկայացնելու պահին հիմնավորող փաստաթղթեր չեն ներկայացվել: Դրանք ներկայացվել են միայն 14.06.2018թ. ժամը 12:53-ին:

Վերոգրյալը հիմնավորում է այն փաստը, որ ընկերությունը օրենսդրությամբ սահմանված պահանջներով և տեխնիկապես հնարավորություն է ունեցել սահմանված ժամկետում ներկայացնելու որակավորումը հիմնավորող փաստաթղթեր, ինչը վերջինիս կողմից չի արվել:

Հետևաբար, գնահատող հանձնաժողովի 31.05.2018թ. N 4 արձանագրությամբ «Վանդաժի» ՍՊԸ-ի հայտը մերժելու որոշումը հիմնավոր է և կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր ՀՀ Սպիտակ համայնքի լիազորված ներկայացուցիչ Արսեն Ավետիսյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/79 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Վանդաժի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 11.06.2018թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 24.05.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 3 և 31.05.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությունները, Պատվիրատուի կողմից 14.06.2018թ. թիվ 034/27-639 գրությամբ Բողոքներ քննող անձին ներկայացված գրավոր դիրքորոշումը.

ՀՀ Սպիտակ համայնքի կարիքների համար՝ Սպիտակ համայնքի Այգեստան-1, Քըրք Քըրքորյան, Գր. Լուսավորիչ, Բանավան թաղամասերի և Խնկոյան, Աճեմյան, Մյասնիկյան փողոցների լուսավորության համակարգերի կառուցման և Սպիտակ համայնքի էստոնական, ուզբեկական, Տաշիր թաղամասերի փողոցների լուսավորության համակարգերի վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև ընթացակարգ), որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Վանդաժի» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի՝ N 3 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովը 24.05.2018թ. ժամը 12:00 նիստի թիվ 3 արձանագրության՝

- 2.4 կետով որոշել է ընթացակարգի 4-րդ չափաբաժնի մասով առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Վանդաժի» ՍՊԸ-ին:

- 4-րդ կետով որոշել է ծանուցել առաջին տեղն զբաղեցրած մասնակիցին՝ առաջարկելով ծանուցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում հրավերով սահմանված էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Նշված փաստաթղթերը ներկայացնելու նպատակով՝ 24.05.2018թ. ոչ ավտոմատ եղանակով, «Վանդաժի» ՍՊԸ-ն ծանուցվել է:

Հանձնաժողովը 31.05.2018թ. ժամը 12:00-ին կայացած նիստին թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է, որ «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից համապատասխան ժամկետում որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը չեն ներկայացվել:

Նույն արձանագրության 1-ին կետով որոշել է «Վանդաժի» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«Վանդաժի» ՍՊԸ-ն 11.06.2018թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը armeps.am էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ստացել է ծանուցումը, որի համաձայն՝ «Վանդաժի» ՍՊԸ-ին ծանուցումն ուղարկելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պետք է ներկայացներ որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը Հանձնաժողովի քարտուղար Արսեն Ավետիսյանի arsenavetis@mail.ru էլեկտրոնային հասցեին: Ընկերությունը սահմանված ժամկետում՝ Հանձնաժողովի քարտուղար Արսեն Ավետիսյանի arsenavetis@mail.ru էլեկտրոնային հասցեին ուղարկել է պահանջած որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը և միայն պայմանագիր կնքելու որոշման մասին www.gnumner.am կայքում 05.06.2018թ. հրապարակված հայտարարությունից պարզել է, որ վերջինիս հայտը մերժվել է՝ սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով:

Բողոքի քննության նպատակով տեղի ունեցած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը համակարգչի միջոցով բացեց vandajiooo@mail.ru էլեկտրոնային հասցեն և որպես ապացույց Բողոքներ քննող անձին և Պատվիրատուի ներկայացուցչին ցույց տվեց, որ 25.02.2018թ. նշված հասցեից ուղարկել է պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող բոլոր փաստաթղթերը՝ Հրավերով նախատեսված՝ arsenavetis@mail.ru էլեկտրոնային հասցեին:

Պատվիրատուի ներկաացուցիչը ընդունեց, որ առկա է «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից 25.02.2018թ. vandajiooo@mail.ru էլեկտրոնային հասցեից Հրավերով նախատեսված

որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ուղարկելն ապացուցող փաստը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):
- 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ հայտը գնահատվում է բավարար, եթե նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղը զբաղեցրած մասնակցին:

Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով

առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով նույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Վանդաժի» ՍՊԸ-ն 25.02.2018թ. նշված հասցեից ուղարկել է պահանջվող որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը՝ Հրավերով նախատեսված՝ arsenavetis@mail.ru էլեկտրոնային հասցեին:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Վանդաժի» ՍՊԸ-ն կատարել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով և Հրավերի 7.13 կետի 4-րդ ենթակետով սահմանված պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից 11.06.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել:

2. Պարտավորեցնել ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Վանդաժի» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմքով՝ հայտը մերժելու վերաբերյալ կայացրած որոշումը դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

3. Պարտավորեցնել ՀՀ ԼՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-18/11 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «Վանդաժի» ՍՊԸ-ից որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնել պահանջելու մասին համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ